



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



« 22 » 26 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 61

**Ձեռնարկողը՝**

**Շ. Մկրտչյան**  
Ք. Երևան, Կոմիտաս7/12, բն 19

**Գործունեությունը՝**

**Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 61

«22» 06 2018թ.

**Քաղաքացի Շ. Մկրտչյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման նախնական գնահատման հայտ**

|                           |  |
|---------------------------|--|
| Պատվիրատու՝               | Քաղաքացի Շ. Մկրտչյան                           |
| Նախագծող՝                 | <<Անառչ>> ՍՊԸ. Ա/2 Ա.Գալոյան                   |
| Ներկայացված նյութեր՝      | Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ; |
| Տեղադրման վայրը՝          | ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա համայնք             |
| Գործունեության կատեգորիան | /Գ/ կատեգորիա                                  |

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի Քաղաքացի Շ.Մկրտչյանը նախատեսում է Երևան քաղաքի Սեբաստիա փողոցի 14,143,141/4,45,14/3 և Միքայելյան 9,9/3,7/1,7 հասցեներում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման աշխատանքներ:

Նախագիծը իրականացվել է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, 15.05.2018թ տրված N 01/18-07/1-Մ -3437-325 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շինարարական նորմերի ու կանոնների:

Առևտրի կենտրոնի մասնաշենքը նախատեսված է վերակառուցել և ընդլայնել ք.Երևան, Սեբաստիա 14,143,141/4,45,14/3, Միքայելյան 9,9/3,7/1,7 հասցեներում հատկացված հողատարածքում: Շինությունը 5 հարկանի է, հատակագծում ունի 153.7x157.5մ առանցքային չափեր:

Շինությունը իրենից ներկայացնում է միաձույլ ե/բետոնե կարկաս 8մ երկայնական և 9մ լայնական սյուների քայլով:

Շինության գոյություն ունեցող մասի 1 հարկի մակերեսը կազմում է 11.600 մ<sup>2</sup>, իսկ ավելացող մասի մեկ հարկի մակերեսը կազմում է 12.900 մ<sup>2</sup>, որից հաշվարկված է 36 ամսվա շինարարության տևողություն ըստ ՇՆԵՎԿ 1.04.03-2008-ի նորմերի:

Ըստ շին կազմակերպման շինարարությունը կատարվում է 2 փուլով նախապատրաստական փուլ և հիմնական փուլ: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում





- շինարարական նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շինարարական հրապարակի գիշերային լուսավորվածություն
- Շին հրապարակի հակահրդեհային անվտանգության գույքով ապահովում

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են 'հետ-բահ' էքսկավատորով: Բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափների միջոցով 13-15 կմ հեռավորության վրա: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով փոքր մեխանիզմներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է 2 թրթուրավոր կոունկներ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:

- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:

- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է ընթացքում տարածքի բուսահողը հանել և կույտավորել պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար:

- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:



- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

**Եզրահանգում՝** Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են երկու հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի Շ. Մկրտչյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի ընդլայնման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Ա. Մինասյան